

մտաբար դառնացնելու համար առաջավոր Ասիայի մեջ: Ինչ և լինեին Եբրայական նպատակները այս թե այն կողմից այդպիսի հաստատությունների հիմնադրության օրերին, մեր ուղադրությունը գրավում է այս տեսակ գործերում հայաց ազգի միշտ երևան եկող շինարար հոգին, նոցա նախածնունդությունը հոգուտ միջազգային կուլտուրական հարսրերությանց բարգավաճման:

3. Հայերի այս միջազգային շինարար դերը ոչինչ չէ կորցնում այն բանի համար, որ աշխարհակալները հայ ազգի ուժերն իրենց և կամ տիրապետող խավերի սեփականություն դարձացած պետությանն էլն ծառայեցնում՝ շնորհունակ ժողովրդին ենթարկելով անզուսպ բռնության: Դուք հիշում եմ, իմարկն, ինչպես իր աշխարհի առևտարական հարաբերությունները նվազապայի հետ բարվախելու համար Շահ Աբասը ամբողջ բարգավաճ գեղեցկաշեն ֆաղաք բան-

դեց՝ տեղափոխելով Հայաստանից Պարսկաստան երա սչ միայն վանտակաւնության հմուտ, այլև գեղարվեստական նուրբ ճաշակով օժտված բնակիչներին:

4. Քաղաքացիական և տնտեսական անցքերը էլն են տեղից տեղ: աշխարհից աշխարհ այս զարմանալի, գեղարվեստորեն և գրականորեն օժտված և կրթիչ ցեղը, որն իր հետ սրբուում էր արվեստը, գեղարվեստի ճաշակը և դպրության լուսը, թե՛ հեռու հյուսիս՝ Լեհաստանի մեջ սուկերչության սահմանի զարգացման զարկ տալով: թե՛ հեռու հարավ՝ Եթովպացոց աշխարհի գրականության շարժման մասնակից դառնալով:

5. Հայկական ազդեցությունը նշմարվում է ոչ միայն Փարս Ասիայի սելջուկական արվեստի վրա, այլև հրեանց առաջ Բյուզանդիայի և առաճնին՝ ուսուցանելու նախադասությունները վրա:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱԿԱՆ ՍՊԵՍԱՐԿՈՒՄԸ ԱՐԳԻ ՓՈՒՆՈՒՄ

Ս. Մ. ԴԱՅԱՆ

Գյուղական բնակչության կուլտուրական լուսաստանական առանձնահատկությունների աշխարհագրական ուսումնասիրությունը արդի փուլում հրատապ խնդիրներից մեկն է համարվում: Կուլտուրական սպասարկման զարգացումը պայմանավորված է գյուղական բնակչության կուլտուրական պահպանմանը մեծացմամբ, կուլտուրական ծառայությունների շրջանակի լայնացմամբ, կուլտուրա-լուսավարական հիմնարկների աճով, որոնք նպաստում են սպասարկման առանձին նյութերի գործունեության կատարելագործմանը:

Կուլտուրան սոցիալական բարձր համակարգ է, որը նորմավորում է մարդկանց նյութական և հոգեբար կյանքը, նրանց մոտածողությունը, գործունեությունը, հարաբերությունները: Այն կապված է բնակչության աշխատանքային և սոցիալական պայմանների, ազատ ժամանակի արդյունավետ օգտագործման առանձնահատկությունների հետ: Կուլտուրայի զարգացման վրա զգալի ազդեցություն ունեն արտադրության հասարակական ձևը և նախարակական հարաբերությունների բնույթը, որն էլ ձևավորում է կուլտուրայի համապատասխան տեսակ:

Առաջընթացը կենտրոնիկայում ազգում է կուլտուրական սպասարկման վրա բնակչության ռեալ եկամուտների բարձրացման, նրանց բնակարանային, կենցաղային պայմանների բարելավման, առողջապահական գործունեության, նյութական բազայի ստեղծման և այլ միջոցներով: Գյուղական բնակչության նյութական պահպանմանը բավարարում իրականում է

կուլտուրական սպասարկման մակարագի բարձրացումը:

Գյուղական բնակչության կուլտուրական սպասարկումը ներկա փուլում ունի բազմաթիվ պրոբլեմներ, որոնք լուծման շուտափուր կարիք ունեն:

Կուլտուրական սպասարկման տարածքային կազմակերպումը այսօր անհնար է պարկերացնել առանց տարածքային կառավարման, որի ուսումնասիրությամբ զբաղվել են Ս. Վոզնեսենսկին, Վ. Մ. Օրլովը, Ա. Պ. Միլիվանցիկը, Ա. Պ. Մելնիկովը և ուրիշներ: Գյուղական կուլտուրական հասարակության խոշորացումը, կենտրոնացումը և նրանց կառավարումը մեծ նշանակություն ունի կուլտուրական սպասարկումը ռացիոնալ կազմակերպելու համար: Կուլտուրական համայնքների առանձին բողոքողիչների ուսումնասիրությունը կատարվել է. բանգարանների՝ է. Ա. Պավլյունենկոյի, Կիսկոբների՝ Գ. Պ. Բիլչովայի և այլ հեղինակների կողմից: Կուլտուրական հիմնարկների պլանավորումը, առանց որի կուլտուրական սպասարկման կազմակերպումը անհնար է պատկերացնել, ուղադրության է արժանացել Պ. Յուլյանի, Ն. Բ. Բուլգակովի, Ն. Բ. Սանգունովի և ուրիշների կողմից:

Կուլտուրական սպասարկման ոլորտի նյութերի կարևոր առանձնահատկությունն այն է, որ նրանք իրենց ազդեցության տակ են ներգրավում բնակչության բոլոր շերտերը, անկախ նրանց տարիքից, կրթությունից, զբաղմունքից: Կուլտուրական սպասարկման զարգացման մակարագիլը ցույց տալու համար կարևոր է

բնական ցուցանիշներից՝ զբաղյին ֆոնդ, կինո հանախումների բանակ, զբաղահովածություն և այլն: Որպեսզի լրիվ պատկերացում ստեղծվի կուլտուրական ոլորտի տարածային կազմակերպման վերաբերյալ, անհրաժեշտ են ոչ այնքան ընդհանուր ցուցանիշներ, որքան բնակչության 1 շնչին ընկնող կուլտուրական ծառայությունների ցուցանիշների օգտագործում, որոնք համակողմանիորեն կրթացահայտեն տարածային տարբերությունները:

Կուլտուրական հիմնարկների գործունեության միակ աղբյուրը ազգային եկամուտն է: Կուլտուրական ծառայությունների մի մասը մատուցվում է բնակչությանը հասարակական ֆոնդերի հաշվին: Այդ պատճառով կուլտուրական համակարգի ամբողջ ծավալը որոշակի է դարձնում հասարակական ֆոնդերի չափով, որոնք ուղղված են կուլտուրայի, արվեստի զարգացմանը: Կուլտուրական ծառայությունները արտահայտվում են արժեքային ցուցանիշներով, լինում են վճարովի և անվճար: Անվճար ծառայությունների ծավալը իրենից ներկայացնում է ընթացիկ ծախսերի գումար, որը ներառում է հիմնական ֆոնդերի մշակման հատուցումը և լուսավորության, առողջապահության, կուլտուրայի և արվեստի բնագավառի աշխատողների աշխատավճարը: Այս ցուցանիշի հաշվարկումը առաջարկել է Վ. Մ. Կուցենկոն՝

$$Q = \frac{\sum_{i=1}^n (P_i + P_e)}{L}$$

որտեղ Q կուլտուրական ծառայությունների ծավալն է, P_i —ընթացիկ ծախսերը, P_e —շահագործվող ծախսերը, L—նպաստի բնակչության բանակը, $i=1, 2, \dots$ ծառայությունների տեսակը:

Կուլտուրական սպասարկման չափումնասիրության համար կարևոր է հանախումների բանակական ցուցանիշների օգտագործումը: Այս ցուցանիշների ճշգրտությունը որոշվում է կինո, քառուս հանախաղների օգտագործած ասեսների բանակով, իսկ ակումբներում, ուր մասսայական միջոցառումներ տեղի են ունենում անվճար, հանախումների մասին ռեալ տեղեկություններ դժվար է ստանալ: Նման իրավիճակ է տիրում և գրադարանային սպասարկման մեջ: Վիճակագրական օրգանները չունեն այնպիսի տվյալներ, որ զբոսի միջին բանակը 1 բնակչի հաշվով, քանի որ զբոսային ֆոնդերի մեծ մասը գտնվում են տնային գրադարաններում: Այդպիսի օգտվում են այնպիսի ցուցանիշներից, ինչպիսին է սպազբված հրատարակությունների բանակը (պիրզ, աստագիր): Ակնհայտ է դառնում, որ կուլտուրական սպասարկման մակարդակը բնորոշող ցուցանիշներից են՝ կինո

հանախումների բանակը 1 բնակչի հաշվով, միջին զբոսապահովածությունը, տարվա ընթացքում 1 բնակչի հաշվով միջին ընթերցանությունը:

Պյուղական բնակչության կուլտուրական քապասարկման վրա անմիջականորեն ազդում են՝

1. Բնական գործոնները.

ա) կլիմայական պայմանները, որոնք ներգործում են կյանքի պայմանների և բնակչության ծախսերի վրա (հագոստի, սնդի, շեռուցման, բուժման և այլն),

բ) ռելիեֆը (հարթավայրային և լեռնային), լեռնային ռելիեֆի առկայությունը խոչընդոտում է կուլտուրական հիմնարկների համաչափ տեղաբաշխումը: Լեռնային ռելիեֆի պայմաններում գործում են կուլտուրական սպասարկման շարժական ձևերը (շարժական ակումբներ, կինոսարժեր):

2. Տնտեսական գործոնները.

ա) տնտեսության զարգացման մակարդակ,

բ) տնտեսության ճյուղային և տարածային կառուցվածք, սրբ ազդում է գյուղական տարաբնակեցման վրա,

գ) արանսպորտային զարգացած ցանց, առանց որի անհնար է պատկերացնել կուլտուրական ծառայություններից օգտվելը:

3. Դեմոգրաֆիական գործոնները.

ա) բնակչության բնական աճ,

բ) միգրացիաներ, գյուղական բնակիչների մի մասը տարվել որոշ սեզոններին ժամանակավոր աշխատելու նպատակով հեռանում են իրենց մշտական բնակավայրերից (կուլտուրական քապասարկման որոշ ձևերի (կինո ցուցադրում) կազմակերպումը իրականացվում է տղամարդկանց միջոցով):

գ) բնակչության սեռատարիքային կառուցվածքը, կուլտուրական հիմնարկներ հանախում են ավելի շատ մինչև 30 տարեկան երիտասարդներ, տղամարդիկ, որոնք ծանրաբեռնված չեն կենցաղային հոգսերով:

4. Սոցիալական գործոնները:

ա) գյուղական բնակչության դրամական եկամուտները.

բ) գյուղական բնակչության զբաղվածության կառուցվածքը, գյուղական բնակչության մեծ մասը զբաղված են գյուղատնտեսական աշխատանքներով, որի պատճառով ազատ ժամանակ էին են ունենում կուլտուրական ծառայություններից օգտվելու: Այժմ մեծանում է նաև առևտրի ցանցում և ոչ արդարական ոլորտում զբաղվածների բանակը.

գ) գյուղական բնակչության աշխատանքային, բնակարանային, կենցաղային պայմանները, որոնց առկայությունը պայմանավորում է կուլտուրական սպասարկման ուսցիոնալ կազմակերպումը:

Պյուղական բնակչության համար կարևոր է համարվում սպասարկման առանձին տեսակների տարածային մատչելիությունը, տարաբնակեցման յուրահատուկ տիպը: Քանի որ կուլտուրական հիմնարկները հնարավոր չէ տեղաբաշխել բոլոր գյուղերում՝ կապված տար-

1 В. И. Куценко. Региональные особенности развития социально-культурной сферы. Киев, 1984 г., стр. 41.

բեր մեծության բնակավայրերի, նրանցում բնակչության թվաբազանի հետ, անհրաժեշտ ապահովել այդ հիմնարկների առավելագույն մտղելիությունը գյուղական բնակչությանը: Գ. Ե. Լուխմանովը առաջարկում է ստեղծել սպասարկման աստիճանածև համակարգ: Ըստ նրա ստորին օլակը կհամարվի միջգյուղական կենտրոնը, բարձր՝ շրջանայինը, իսկ հիմնական օլակը՝ վարչապետ շրջանը, որպես տնտեսական և տարածային կազմակերպման սկզբնական միավոր: Լիդլայիս կենտրոնը անկախ բնակավայրի տիպից, հանդիսանում է միասնական համալիր իրեն ենթակա տարածքի կառավարման և սպասարկման կազմակերպման համար²:

Կուլտուրական շատ օբյեկտներ գյուղում բուտեղծվում են առանց գիտական հիմնավորման: Կուլտուրական հիմնարկների ռացիոնալ տեղաբաշխումը, նրանց տարածային կազմակերպումը նպաստում են նրանց տարածային կենտրոնացմանը, որը թույլ է տալիս նյութական և աշխատանքային ռեսուրսների էիջ ծախսումների ղեկավարում հասնել կուլտուրական սպասարկման բարձր մակարդակի:

² Д. Н. Лухманов. Некоторые условия формирования местных центров обслуживания и их систем.—В сб.: «Вопросы географии» Сб. 91, М. 1972, с. 105—107.

Գյուղական բնակչության կուլտուրական սպասարկման մեջ իրենց ուրույն տեղն ունեն սպասարկման շարժական ձևերը: Նրանց կազմակերպման վրա ազդում են մի շարք գործոններ՝ բնակավայրերի շափը, բնակչության խտությունը և այլն:

Գյուղի կուլտուրական սպասարկման ոլորտը բարդ, անընդհատ զարգացող ոլորտ է: Նոր սերտ կապի մեջ է սցիալականի հետ: Գյուղական բնակավայրերի սցիալ-կուլտուրական ոլորտի դինամիկ զարգացումը մեր օրերում կախված է գյուղի աշխատավորության կյանքի և աշխատանքի, կենցաղի և հանգստի պայմանների համալիր լուծումից: Այդ իսկ պատճառով մենք առաջարկում ենք գյուղական բնակչության կուլտուրական սպասարկման առջև ծառայած խնդիրները լուծել՝ զուգակցելով սցիալականի հետ: Դրանցից առավել էական են.

1. Գյուղի սցիալ-կուլտուրական ոլորտի նյութատեխնիկական բազայի ամրապնդումը,
2. Գյուղական բնակչության կյանքի, կենցաղի պայմանների բարելավումը,
3. Գյուղական բնակչության կրթական մակարդակի բարձրացումը,
4. Գյուղական կուլտուրական հիմնարկների (գրադարանների, սկոլրների, կինոթատրոնների և այլն) ցանցի ընդլայնումը, նրանց աշխատանքի կատարելագործումը:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՄՄԱԿԱՐԱՆԻ

ՏԱՐԻԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՏԱՇՐՋԱՆԸ

Երևանի պետական համալսարանում ավանդաբար անցկացվող պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների տարեկան գիտական նստաշրջանը այս տարի սկսվեց նոյեմբերի 27-ին: Լիազումար հիստը, որը տեղի ունեցավ նույն օրը, համալսարանի խորհրդի նիստերի դահլիճում, բացեց գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, ՀԳԱ թղթակից անդամ, պրոֆ. Վ. Սարգսյանը:

Այսօր Երևանի համալսարանում, նշեց նա, գիտական գործունեություն է ծավալվում 20 ուղղություններով, որոնցից 21-ը՝ բնագիտական և 8-ը՝ հումանիտար ու հասարակական գիտությունների գծով: Հումալսարանը մասնակցում է համամիութենական՝ 18, ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեի՝ 12, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի՝ 7 և Հայաստանի գիտությունների ակադեմիայի՝ 5 կոորդինացիոն ծրագրերի ու պլանների կատարմանը, որոնք ընդգրկում են բնագիտության ու հասարակագիտության ամենատարբեր բնագավառները:

ԽՍՀՄ ԳԱ կոորդինացիոն պլանով շարունակվում են հայագիտական հետազոտությունները, ուսումնասիրվում է հայոց, ռուսաց և օտար լեզուների գործառնություն հիմնական հարցերը, նրանց զարգացման օրինաչափու-

թյուններն ու առնչությունները: Լուրջ ուշադրություն է դարձվում հայ ժողովրդի հին ու միջին դարերի և նոր շրջանի պատմության ու մշակույթի, ԽՍՀՄ ժողովուրդների և արտասահմանյան երկրների հետ նրա ունեցած պատմական կապերի հետազոտություններին:

Մի շարք ուսումնասիրություններ էլ, շարունակեց պրոֆ. Վ. Սարգսյանը, վերաբերում են մեր հանրապետության բնական միջավայրի պահպանության ու բարելավման գիտական հիմունքների մշակմանը, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, աշխարհագրական կանխագուշակումներին, հայ բնակչության և մշակույթի առաջիկ կզմանը, հնէագեոմորֆոլոգիական ու ջրաերկրաբանական հարցերի բնագրականը:

Երևանի համալսարանում հետազոտություններ են կատարվում նաև նվիրված պետության և իրավունքի, հասարակության սցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման օրինաչափություններին, ինչպես և արեվելագիտության, բուրգագիտության ու հայոց դատի պաշտպանության խնդիրներին, իր ներածական խոսքը եզրափակելով, ասաց պրոֆ. Վ. Սարգսյանը:

Այնուհետև լիազումար հիստում «Ակսել հակունց. մեծ գրողը և նահատակը» թեմա-